

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» ապրիլի 2005թ.

N 211

Ստեփանակերտ

**Հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգը և շահագործման կանոնները  
հաստատելու մասին**

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգը և շահագործման կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2005 թվականի մայիսի 1-ից:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա.ԴԱՆԻՇԵԱՆ

## Հսկիչ-դրամարկային մեքենաների գրանցման կարգ և շահագործման կանոններ

### I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը և կանոնները (այսուհետ՝ կանոններ) մշակվել են «Հսկիչ դրամարկային մեքենաների կիրառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

2. Օրենքով սահմանված ոլորտներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում հսկիչ-դրամարկային մեքենաների (այսուհետ՝ ՀՂՄ-ներ) պարտադիր կիրառմամբ մանրածախ վաճառք իրականացնող կամ բնակչությանը ծառայություններ մատուցող՝ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկները, բացառությամբ բանկային հաշիվների միջոցով կատարվողների, իրականացնում են ՀՂՄ-ի միջոցով:

Կազմակերպությունները հաշվարկները կատարում են միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունում (այսուհետ՝ հարկային մարմին) սույն կանոններով սահմանված կարգով գրանցված և կապարակնքված ՀՂՄ-ների միջոցով:

3. ՀՂՄ-ի շահագործման կանոնների և ՀՂՄ-ի միջոցով հասույթների հաշվառման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը:

### II. ՀՂՄ-ների գրանցումը հարկային մարմնում

4. Օրենքով սահմանված կարգով ՀՂՄ-ի պարտադիր կիրառմամբ գործունեություն իրականացնող կազմակերպություններն հարկային մարմին են ներկայացնում դիմում՝ համաձայն N1 ձևի, իրենց կողմից օգտագործման (շահագործման) համար նախատեսվող ՀՂՄ-ի (այդ թվում՝ վարձակալված և (կամ) ժամանակավորապես օգտագործվող) գրանցման մասին:

Դիմումին կից ներկայացվում են ՀՂՄ-ի (ՀՂՄ-ների) անձնագիրը (անձնագրերը), պետական գրանցում ստացած՝ տեխնիկական սպասարկում և նորոգում իրականացնող կենտրոնի (այսուհետ՝ կենտրոն) հետ կնքված ՀՂՄ-ի տեխնիկական սպասարկման և նորոգման պայմանագրի (պայմանագրերի) պատճենը (պատճենները)՝ մինչև ՀՂՄ-ի գրանցումն այդպիսի պայմանագրի կնքման դեպքում, հաշվառման վայրի հարկային մարմնի կողմից ՀՂՄ-ի տեղակայման ենթակա տարածքների ուսումնասիրության վերաբերյալ կազմված տեղեկանքը, իսկ շրջիկ կետի միջոցով մանրածախ առևտրի իրականացման դեպքում՝ նաև այդ տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրի և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված առևտրի իրականացման թույլտվության պատճենները: ՀՂՄ-ի գրանցումից հետո կենտրոնի հետ կնքված պայմանագրերը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված առևտրի իրականացման նոր թույլտվության պատճենները ևս ենթակա են ներկայացվելու հարկային մարմին:

5. Հարկային մարմինը սույն կանոնների 4-րդ կետում նշված բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում կատարում է ՀՂՄ-ի գրանցում:

6. Սույն կանոնների 4-րդ կետում նշված փաստաթղթերը թերի ներկայացվելու, իսկ շրջիկ կետի միջոցով մանրածախ առևտրի իրականացման դեպքում առանց տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրված առևտրի իրականացման առնվազն մեկ թույլտվության պատճենը չներկայացվելու դեպքերում հարկային մարմինը եռօրյա ժամկետում բոլոր փաստաթղթերը վերադարձնում է կազմակերպություն՝ ՀՂՄ-ի չգրանցման պատճառների գրավոր հիմնավորմամբ:

7. Հարկային մարմինը ՀՂՄ-ի գրանցումից հետո այն կապարակնքում է հարկային մարմնի կլոր կնիքով՝ 2 տեղից (հանդիպակաց): Կապարակնքված ՀՂՄ-ն և սույն կանոնների 4-րդ կետում նշված բնօրինակները վերադարձվում են կազմակերպություններին միաժամանակ նրանց տալով հարկային մարմնում ՀՂՄ-ի գրանցման քարտի (Ձև N 2) մեկ օրինակը, իսկ սույն կանոնների 4-րդ կետում նշված փաստաթղթերի պատճենները պահվում են հարկային մարմնում:

8. Օգտագործվող ՀՂՄ-ն նորով փոխարինելու կամ լրացուցիչ ՀՂՄ տեղակայելու անհրաժեշտության դեպքում կազմակերպությունը պարտավոր է, նախքան նոր ՀՂՄ-ի օգտագործումը,

հարկային մարմին ներկայացնել դիմում՝ նոր ՀՂՄ-ի գրանցման և նախկինում գրանցված՝ փոխարինման ենթակա ՀՂՄ-ն գրանցումից հանելու մասին:

Կազմակերպությունը մեկ տրանսպորտային միջոցի վրա տեղակայված ՀՂՄ-ն մեկ այլ տրանսպորտային միջոցի վրա տեղակայելու համար պարտավոր է հարկային մարմին ներկայացնել դիմում, նախկինում գրանցված ՀՂՄ-ն գրանցումից հանելու և այն նոր տրանսպորտային միջոցի վրա գրանցելու մասին: Դիմումին կից ներկայացվում են նաև սույն կանոնների 4-րդ կետում նշված փաստաթղթերը:

9. Հարկային մարմինը ՀՂՄ-ի փոխարինման կամ լրացուցիչ ՀՂՄ-ի տեղակայման, կամ տրանսպորտային միջոցի փոխանակման մասին դիմումն ստանալուց հետո ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է նոր ՀՂՄ-ն և (կամ) գրանցումից հանում նախկինում գրանցված ՀՂՄ-ն՝ կազմակերպությանը տալով նոր քարտ:

10. Կազմակերպության լուծարման, վերակազմավորման կամ բոլոր այն դեպքերում, երբ տվյալ կազմակերպությունում ՀՂՄ-ն հանվում է օգտագործումից, վերջինս հարկային մարմին է ներկայացնում դիմում՝ ՀՂՄ-ն գրանցումից հանելու մասին: Հարկային մարմինը 3 օրվա ընթացքում ՀՂՄ-ն հանում է գրանցումից և դրա մասին քարտում կատարում է համապատասխան գրառում, որը հաստատվում է հարկային մարմնի համապատասխան գործառույթ իրականացնող ստորաբաժանման ղեկավարի ստորագրությամբ և կնքվում հարկային մարմնի կնիքով:

11. Կազմակերպությունը քարտը պահպանում է ՀՂՄ-ի օգտագործման վայրում՝ օգտագործման ամբողջ ժամանակահատվածում, և ներկայացնում է հարկային մարմնի պահանջով: ՀՂՄ-ն օգտագործումից հանելու ժամանակ քարտը վերադարձվում է հարկային մարմին: Վերադարձված քարտը հարկային մարմնում պահվում է տվյալ ՀՂՄ-ն օգտագործումից հանելու օրվանից սկսած 3 տարվա ընթացքում: Շահագործողի պահանջով հարկային մարմնի կողմից նրան տրվում է տեղեկանք տվյալ ՀՂՄ-ն գրանցումից հանելու մասին:

### **III. ՀՂՄ-ների գործարկումը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը**

12. ՀՂՄ-ի տեղակայման, գործարկման ժամանակ կատարվում են տվյալ մոդելի ՀՂՄ-ի շահագործման կանոններով նախատեսված պարտադիր գործողություններ, և միաժամանակ լրացվում է ՀՂՄ-ի գործարկման ակտ՝ համաձայն N 3 ձևի:

13. Կազմակերպությունը վարում է ՀՂՄ-ի և նրա հանգույցների՝ բոլոր տեսակի խախտումների, կենտրոնում կատարվող նորոգումների և կազմակերպությունում կատարվող տեխնիկական սպասարկման (որոնք նախատեսված են տվյալ մոդելի ՀՂՄ-ի շահագործման կանոններով) մասին տվյալների գրանցման գիրք՝ համաձայն N 6 ձևի: Գրանցման գրքի էջերը համարակալվում և թելակարվում են կազմակերպության կողմից: Գիրքը կնքվում և համարակալվում է հարկային մարմնի կողմից: Կազմակերպություններն այդ տվյալները յուրաքանչյուր եռամսյակ, մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ, ներկայացնում են հարկային մարմին:

14. Կենտրոնն իր կողմից կատարված տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքների գծով վարում է հաշվառում այդ նպատակով բացված գրքում (N 7 ձև): Այդ գրքի էջերը համարակալվում և թելակարվում են սպասարկող կենտրոնի կողմից: Գիրքը կնքվում և համարակալվում է հարկային մարմնի կողմից: Կենտրոնները յուրաքանչյուր սպասարկվող և նորոգվող ՀՂՄ-ի նորոգման (տեխնիկական սպասարկման) աշխատանքների ավարտից անմիջապես հետո հարկային մարմին են ներկայացնում տեղեկանք տվյալ ՀՂՄ-ի վրա կատարված սպասարկման և նորոգման աշխատանքների մասին:

Կենտրոնները յուրաքանչյուր եռամսյակի համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կողմից սահմանված կարգով և ժամկետում տեղեկություններ են ներկայացնում իրենց կողմից իրականացված տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքների մասին:

15. Շահագործման գործարանային համարները, ՀՂՄ-ն շահագործող հարկ վճարողի հաշվառման համարը (այսուհետ՝ ՀՎՀՀ), հարկային մարմնում ՀՂՄ-ի գրանցման համարը և գործունեության իրականացման վայրը (հասցեն) նշվում են ՀՂՄ-ին առնչվող բոլոր փաստաթղթերում (դրամարկղային չեկ (կտրոն), հաշվետվություն և այլն):

### **IV. ՀՂՄ-ն աշխատանքին նախապատրաստելը**

16. Կազմակերպությունում ՀՂՄ-ի միջոցով հաշվարկներն իրականացնելու համար այդ պարտականությունները սահմանված կարգով (հրամանով) դրվում են համապատասխան աշխատողի վրա (այսուհետ՝ պատասխանատու անձ):

17. Հարկային մարմնում ՀՂՄ-ի գրանցման քարտը, ՀՂՄ-ի անձնագիրը և կենտրոնների հետ կնքված պայմանագրերը պահպանվում են կազմակերպության գործունեության իրականացման վայրում:

18. Կազմակերպության պատասխանատու անձը պարտավոր է աշխատանքային օրվա (հերթափոխի) սկզբում ստուգել ՀԴՄ-ի աշխատանքը, ՀԴՄ-ում տեղադրել չեկային (կտրոնային) ժապավեն և այն միացնել:

#### **V. Պատասխանատու անձի աշխատանքը հերթափոխի ընթացքում**

19. Պատասխանատու անձը պարտավոր է՝

ա) հաշվիչ սարքի միջոցով մուտքագրել դրամական գումարը, որոշել ընդհանուր գումարը և տեղեկացնել գնորդին, պատվիրատուին և այլն,

բ) ՀԴՄ-ի միջոցով տպել և գումարն ստանալու պահին ապրանքի հետ միասին գնորդին, պատվիրատուին տրամադրել դրամարկղային չեկ (կտրոն),

գ) ծառայությունների մատուցման դեպքում՝ չեկը (կտրոնը) տրամադրվում է այդ ծառայության դիմաց կանխիկ վճարում ստանալու պահին:

20. Վաճառված ապրանքների հետընդունման և գումարների՝ սխալմամբ գրանցման դեպքերում կատարվում են հետևյալ ձևակերպումները՝

ա) կազմակերպությունը դրամական հաշվարկների կատարման ընթացքում գնորդի կողմից վճարված գումարների՝ ՀԴՄ-ում գրանցման պահին, մինչև գնման չեկի (կտրոնի) փակումը, սխալմամբ մուտքագրված գումարները, կամ ապրանքի գնումից գնորդի հրաժարվելու դեպքում՝ այդ գումարները՝ ՀԴՄ-ի միջոցով չեղյալ է համարում:

Չեղյալ համարված գումարը չի ներառվում հասույթի գումարի մեջ.

բ) կազմակերպությունը գնորդի կողմից գնված ապրանքների հետընդունման ժամանակ վերադարձի ձևակերպման պահին, գնման չեկի (կտրոնի) հիման վրա կազմում է վաճառված ապրանքների հետընդունման ակտ՝ համաձայն N 8 ձևի.

գ) գնորդի կողմից գնված ապրանքների հետընդունման ակտի հիման վրա ՀԴՄ-ի միջոցով տպվում է վերադարձի չեկ (կտրոն), որը ներառում է ՀԴՄ-ի գրանցման և գործարանային համարները, ՀՎՀՀ-ն, հետ ընդունվող ապրանքների գինը, օրը, ամիսը, տարեթիվը և ժամը, ինչպես նաև «Վերադարձ» նշագրումը:

Այն դեպքում, երբ վաճառված ապրանքները հետ են ընդունվում օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումից հետո, լրացվում է վաճառված ապրանքների հետընդունման ակտը, տվյալ դեպքում վերադարձի չեկ (կտրոն) չի տպվում.

դ) եթե հետ է ընդունվում գնման չեկով (կտրոնով) գնված ապրանքների մի մասը, ապա վերադարձի չեկը (կտրոնը) տպվում է հետ ընդունվող ապրանքների համար վճարված գումարի չափով: Կազմակերպությունում պահպանվում է գնման չեկի (կտրոնի) պատճենը: Գնման չեկի (կտրոնի) բնօրինակի և պատճենի վրա հետ ընդունված ապրանքների համար վճարված գումարի դիմաց կարմիր գույնով կատարվում է «Վերադարձված է» գրառումը.

ե) դրամական հաշվարկների կատարման ընթացքում սխալմամբ մուտքագրված գումարների գրանցման դեպքում, եթե սխալը հայտնաբերվել է գնման չեկի (կտրոնի) փակումից հետո մինչև օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումը, ապա սխալ գրանցումից անմիջապես հետո սխալ գումարով տպված չեկի (կտրոնի) հիման վրա լրացվում է գումարների՝ սխալմամբ գրանցման ակտը՝ համաձայն N 9 ձևի, և ՀԴՄ-ի միջոցով կատարվում է վերադարձ՝ տպվելով վերադարձի չեկ (կտրոն):

Այն դեպքում, երբ սխալը հայտնաբերվել է օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումից հետո, լրացվում է սխալմամբ գրանցված գումարների ակտը, տվյալ դեպքում վերադարձի չեկ (կտրոն) չի տպվում.

զ) հետ ընդունված ապրանքների գնման, գումարների՝ սխալմամբ գրանցման և վերադարձի չեկերը (կտրոնները) ու լրացված ակտերի մեկական օրինակները պահպանվում են կազմակերպությունում՝ տպման (լրացման) օրվանից սկսած 3 տարվա ընթացքում.

է) կազմակերպությունները, յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 25-ը ներառյալ, յուրաքանչյուր ՀԴՄ-ի համար իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում տվյալ ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարման, վերադարձի և գումարների՝ սխալմամբ գրանցման մասին տեղեկանք՝ համաձայն N 10 ձևի.

ը) վաճառված ապրանքների հետընդունման և գումարների՝ սխալմամբ գրանցման ակտերում նշված գումարները չեն ներառվում կազմակերպության իրացման շրջանառության մեջ, իսկ արդեն ներառված գումարների չափով կատարվում է ճշգրտում (կարմիր ստորնոյով):

Չեղյալ համարում, վերադարձի և սխալմամբ գրանցված գումարները ներառվում են կազմակերպության իրացումից հասույթի գումարի մեջ, եթե՝

բացակայում է համապատասխան ակտը կամ ակտի տվյալներից որևէ մեկը, և հարկային մարմնի կողմից ըստ անհրաժեշտության ձեռնարկված վերահսկողական գործողությունների ընթացքում չի հիմնավորվում տնտեսավարող սուբյեկտի ներկայացված փաստարկները՝ ակտի տվյալների բացակայության վերաբերյալ,

սույն կետի «է» ենթակետով սահմանված կարգով և ժամկետում հարկային տեսչություն չի ներկայացվել կատարված չեղյալ համարման, վերադարձի և գումարների՝ սխալմամբ գրանցման մասին տեղեկանքը,

չեղյալ համարման, վերադարձի և սխալմամբ գրանցված տվյալ գումարը չի ներառվել հարկային տեսչություն ներկայացված տեղեկանքում:

20<sup>1</sup>. Հարկային մարմնի կողմից իրականացվող հսկիչ գնման (գնումների) արդյունքում, հսկիչ գնում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից հանձնարարագիրը ներկայացվելուց և արձանագրությունը կազմվելուց հետո, բայց ոչ ուշ, քան հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքների վերադարձման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետները, տնտեսավարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողին են վերադարձվում հսկիչ գնմամբ (գնումներով) ձեռք բերված ապրանքը (ապրանքները), եթե չեն փոփոխվել դրա (դրանց) գնման պահին առկա ապրանքային հատկանիշները:

Հսկիչ-դրամարկղային մեքենայի գնման չեկի (կտրոնի) հիման վրա երկու օրինակից կազմվում է վաճառված ապրանքի հետընդունման ակտ՝ համաձայն N 8 ձևի: Կազմակերպության պատասխանատու անձը ընդունում է վերադարձման ենթակա ապրանքը (ապրանքները), վերադարձնում է ստացված գումարը, հսկիչ-դրամարկղային մեքենայի միջոցով տպում է վերադարձի չեկ (կտրոն): Այն դեպքում, երբ վաճառված ապրանքները հետ են ընդունվում օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումից հետո, լրացվում է վաճառված ապրանքների հետընդունման ակտը, իսկ վերադարձի չեկ (կտրոն) չի տպվում:

Վաճառված ապրանքի հետընդունման ակտն ստորագրում են հսկիչ գնում կատարած անձը (անձինք) և տնտեսավարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողը: Հետընդունման ակտի մեկ օրինակը հսկիչ գնման արձանագրության մեկ օրինակի հետ հանձնվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, որն առարկություններ ունենալու դեպքում դրանք ներկայացնում է գրավոր: Հսկիչ գնման ժամանակ տպված հսկիչ-դրամարկղային մեքենայի չեկի (կտրոնի) վրա հսկիչ գնում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձը կատարում է «Վերադարձ» նշումը, լրացնում ամսաթիվը, ամիսն ու տարեթիվը և ստորագրում:

Եթե վերադարձվում է հսկիչ-դրամարկղային մեքենայի չեկով (կտրոնով) վաճառված ապրանքների մի մասը, ապա կատարվում է բոլոր ապրանքների և գումարի հետվերադարձ, այնուհետև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հետընդունման ոչ ենթակա ապրանքների համար հսկիչ գնում կատարողի կողմից կատարվում է վճարում, որի համար հսկիչ-դրամարկղային մեքենայի միջոցով տպվում և տրամադրվում է հսկիչ-դրամարկղային մեքենայի նոր չեկ (կտրոն):

Սույն կետով նախատեսված դեպքերում հետընդունման ակտում նշված վերադարձի գումարները չեն ներառվում կազմակերպության իրացումից հասույթի մեջ՝ անկախ սույն կանոնների 20-րդ կետի «է» ենթակետում նշված տեղեկանքում (N 10 ձևում) ներառվելու կամ տեղեկանքը հարկային մարմնին ներկայացնելու հանգամանքից: Հսկիչ գնման ժամանակ տպված և վերադարձի չեկերը (կտրոնները) հետընդունման ակտերի մեկական օրինակների հետ պահպանվում են կազմակերպությունում տպման (լրացման) օրվանից սկսած 3 տարի:<sup>(1)</sup>

21. ՀՂՄ-ի աշխատանքի ընթացքում անսարքություն հայտնաբերելիս՝ պատասխանատու անձը պարտավոր է անջատել ՀՂՄ-ն և դրա մասին անհապաղ տեղեկացնել իրավասու ղեկավար անձին: Իրավասու ղեկավար անձն անհրաժեշտության դեպքում սպասարկող կենտրոն է ներկայացնում հայտ՝ համաձայն N 4 ձևի՝ անսարքության վերացման համար՝ հայտի մեկ օրինակը ներկայացնելով հարկային մարմնին: Մինչև ՀՂՄ-ի նորոգումը կամ այն նորով փոխարինելը՝ ՀՂՄ-ների պարտադիր կիրառմամբ գործարքներ կատարելն արգելվում է:

22. Պատասխանատու անձին արգելվում է կողմնակի անձանց թույլատրել աշխատել ՀՂՄ-ի հետ՝ բացառությամբ հարկային մարմնի լիազորված աշխատակիցների և տեխնիկական սպասարկում իրականացնող մասնագետների:

## VI. ՀՂՄ-ի վրա աշխատանքի ավարտը

23. Պատասխանատու անձը հերթափոխի կամ աշխատանքային օրվա ավարտից հետո ՀՂՄ-ից դուրս է բերում հաշվետվության համարը, ընթացիկ հսկիչ ժապավենի համարը, գնումների թիվը, գնումների գումարը, վերադարձի թիվը, վերադարձի գումարը, չեղյալ համարման թիվը, չեղյալ համարման գումարը, հերթափոխային հասույթը, պատասխանատու անձի մոտ առկա կանխիկ գումարը, ինչպես նաև պատասխանատու անձի հերթափոխային հաշվետվությունը, որը հանդիսանում է սկզբնական փաստաթուղթ՝ հասույթը հաշվառելու համար, և պահպանվում է կազմակերպությունում՝ տպվելու օրվանից՝ 5 տարի:

Հերթափոխային հասույթը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, մուտքի օրդերի հիման վրա մուտքագրվում է կազմակերպության դրամարկղ:

24. Պատասխանատու անձի հերթափոխային հաշվետվությունը տպվում է հսկիչ ժապավենի վրա, այն կարող է ստացվել ինչպես ընդլայնված՝ որպես էլեկտրոնային օրագիր՝ չեկերի (կտրոնների) համարների և չեկերը (կտրոնները) տպելու ժապավենի նշամաք, այնպես էլ համառոտ՝ գնումների ընդհանուր հանրագումարով: Չեկի հաշվիչի մարումը պետք է իրականացվի հերթափոխի առաջին չեկի (կտրոնի) ստացումից 24 ժամվա ընթացքում:

## **VII. Հարկային տեսուչի աշխատանքը ՀՂՄ-ի ֆիսկալային (հարկային) հիշողության հետ**

25. Հարկային տեսուչը ՀՂՄ-ի առաջին գրանցման ժամանակ մեքենայի հիշողություն է մուտքագրում հարկային մարմնի կողմից սահմանված՝ տվյալ հարկային տեսուչի նշանաբառը, որը հնարավորություն է տալիս նրան աշխատել ՀՂՄ-ի ֆիսկալային (հարկային) հիշողության հետ:

Նշանաբառի հիման վրա հարկային տեսուչը կարող է ՀՂՄ-ի ֆիսկալային (հարկային) հիշողությունից դուրս բերել ինչպես համառոտ, այնպես էլ ընդլայնված հաշվետվություններ: Հաշվետվությունները կարող են դուրս բերվել ինչպես առանձին ամսաթվերով սահմանափակված ժամանակահատվածի, այնպես էլ կոնկրետ հերթափոխերի համարներով սահմանափակված ժամանակահատվածի համար: ՀՂՄ-ի ֆիսկալային (հարկային) հիշողությունից դուրս բերված հաշվետվությունները կցվում են հարկ վճարողի հարկային գործին:

26. Հարկային տեսուչը ՀՂՄ-ի գրանցման ժամանակ ՀՂՄ է մուտքագրում հետևյալ տվյալները՝ գրանցման տարեթիվը, մեքենայի գործարանային համարը, հարկային մարմնում մեքենայի գրանցման համարը, օգտագործողի ՀՎՀՀ-ն և հարկային տեսուչի նշանաբառը:

27. Կազմակերպության կողմից հարկային մարմին ներկայացված ՀՂՄ-ի ֆիսկալային (հարկային) հիշողության համար կազմվում է ՀՂՄ-ի նորոգման ժամանակ ֆիսկալային (հարկային) հիշողություն տվյալների մասին ակտ՝ համաձայն N 5 ձևի, հարկային տեսուչի, կազմակերպության և կենտրոնի ներկայացուցչի ստորագրությամբ:

28. ՀՂՄ-ի վրա փակցված կապարակնիքները վնասելու իրավասություն ունեցող հարկային մարմնի պաշտոնատար անձանց շրջանակները սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը:

## **VIII. Ժամանակավորապես տրամադրվող կամ վարձակալությամբ վերցված ՀՂՄ-ների շահագործումը**

29. Կենտրոնի կողմից կազմակերպությանը՝ նորոգման աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար ժամանակավորապես տրամադրվող ՀՂՄ-ները, ինչպես նաև կազմակերպության կողմից վարձակալված ՀՂՄ-ները պետք է գրանցված լինեն հարկային մարմնում:

30. Կենտրոնի կողմից կազմակերպությանը՝ նորոգման աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար ժամանակավորապես տրամադրվող ՀՂՄ-ն տրամադրելու պահին գրանցվում են նրա ֆիսկալային (հարկային) հիշողության տվյալները, տվյալ մեքենայի համար կազմվում է գործարկման ակտ՝ համաձայն N 3 ձևի, և նշված ՀՂՄ-ն կապարակնիքվում է:

Կազմակերպության ՀՂՄ-ն նորոգումից վերադարձնելու պահին՝ ժամանակավորապես տրամադրված ՀՂՄ-ից տպագրվում է ընդլայնված ֆիսկալային (հարկային) հաշվետվությունը, որը կարվում է հարկային մարմնում կազմակերպությանը սպասարկող ստորաբաժանման կողմից պահվող հարկային գործում: Նշված հաշվետվության՝ կազմակերպությանը վերաբերող մասը պետք է ներառված լինի կազմակերպության ընթացիկ հաշվապահական հաշվառման մեջ: Իսկ ժամանակավորապես տրամադրվող մեքենայի պատասխանատու անձի հերթափոխի հաշվետվությունները սույն կանոններով սահմանված կարգով ձևակերպվում են կազմակերպությունում, և դրա մասին կազմվում է ակտ (N 11 ձև):

31. Կազմակերպության կողմից վարձակալված ՀՂՄ-ները պետք է գրանցվեն հարկային մարմնում՝ սահմանված ընդհանուր կարգով:

## **IX. Պատասխանատվությունը՝ սույն կանոնները խախտելու համար**

32. Սույն կանոնների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

### **X. Եզրափակիչ դրույթներ**

33. Սույն կանոնների II գլխով սահմանված դրույթները տարածվում են դրանք ուժի մեջ մտնելուց հետո հարկային մարմնում ՀՂՄ-ները գրանցող անձանց վրա:

34. Մինչև սույն կանոնների ուժի մեջ մտնելը հարկային մարմնում գրանցված ՀԴՄ-ների կապարակնքումը մինչև 2005 թվականի հոկտեմբերի 1-ը պետք է համապատասխանեցվի սույն կանոնների 7-րդ կետի պահանջներին: Նշված ժամկետից հետո սույն կանոնների 7-րդ կետի պահանջներին համապատասխան չկապարակնքված ՀԴՄ-ների շահագործումը համարվում է շահագործման կանոնների խախտմամբ ՀԴՄ-ների կիրառում:

**ԼՂՀ կառավարության աշխատակազմի  
ղեկավար նախարար**

**Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Դ Ի Ս ՈՒ Մ

Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններին համապատասխան

(կազմակերպության լրիվ անվանումը և ՀՎՀՀ-ն)

խնդրում է գրանցել հսկիչ-դրամարկղային մեքենաներ՝ թվով \_\_\_\_\_ հատ:  
Նշված հսկիչ-դրամարկղային մեքենաները գրանցելու համար ներկայացնում ենք հետևյալ տվյալները՝

1. \_\_\_\_\_  
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը,  
\_\_\_\_\_ պետական ռեգիստրում գրանցման համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ՀՎՀՀ-ն և հեռախոսահամարը)  
\_\_\_\_\_
2. \_\_\_\_\_  
(ղեկավարի անունը, ազգանունը ծառ. հեռախոսահամարը)  
\_\_\_\_\_
3. \_\_\_\_\_  
(հաշվապահի անունը, ազգանունը ծառ. հեռախոսահամարը)  
\_\_\_\_\_
4. \_\_\_\_\_  
(ՀԴՄ-ների մոդելները, արտադրության տարեթիվը, հաշվիչների տվյալները , ՀԴՄ-ների  
\_\_\_\_\_ շահագործման վայրերը՝ նշելով դրանց կոնկրետ գտնվելու տեղը, (կամ տրանսպորտային միջոցի  
\_\_\_\_\_ պետական գրանցման համարը) ՀԴՄ-ների տեխնիկական անձնագրերի համարները)  
\_\_\_\_\_
5. \_\_\_\_\_  
(տեխնիկական սպասարկման և նորոգման կենտրոնների անվանումները, գտնվելու վայրը, հեռախոսահարմերը)  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Դիմումին կից ներկայացվում են՝  
ՀԴՄ-ների տեխնիկական անձնագրերը՝ \_\_\_\_\_ հատ,  
տեխնիկական սպասարկում և վերանորոգում իրականացնող կենտրոնների հետ կնքված  
պայմանագրերը՝ \_\_\_\_\_ թերթ:  
տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրի պատճենը՝ \_\_\_\_\_ հատ,  
ՀԴՄ տեղակայման ենթակա տարածքի ուսումնասիրության (այցելության) մասին հաշվառման վայրի հարկային  
մարմնի տեղեկանքը՝ \_\_\_\_\_ հատ,  
մանրածախ առևտրի իրականացման համար տեղական ինքնակառավարման մարմնի թույլտվության  
պատճենը՝ \_\_\_\_\_ հատ:

**Կազմակերպության**  
ղեկավար (անհատ ձեռնարկատեր) \_\_\_\_\_  
(ստորագրությունը)  
**Կ.Տ.**  
**գլխավոր հաշվապահ** \_\_\_\_\_  
(ստորագրությունը)

Դիմումի ստացման օրը, ամիսը, տարեթիվը « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 200\_\_թ.  
Հարկային մարմնի \_\_\_\_\_ պետ \_\_\_\_\_  
(ստերաբաժանման անվանումը) (Ա.Ա.Հ., ստորագրություն)



Ք Ա Ր Տ N \_\_\_\_\_

**Հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման**

Հսկիչ-դրամարկղային մեքենան \_\_\_\_\_  
(մոդելը)

Գործարանային համարը \_\_\_\_\_

Պատկանում է \_\_\_\_\_  
(կազմակերպության լրիվ անվանումը. կազմակերպական-իրավական ձևը, հեռախոսահամարը)

Գրանցված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության \_\_\_\_\_  
ստորաբաժանման անվանումը

ՀԴՄ-ի գրանցման համարը N \_\_\_\_\_

Տեղակայված է \_\_\_\_\_

(Գործունեության իրականացման (հասցեն) վայրը կամ տրանսպորտային միջոցի պետական գրանցման համարը)

Հաշվիչների տվյալները \_\_\_\_\_

Տեխնիկական սպասարկումը և նորոգումը կատարում է \_\_\_\_\_

(տեխնիկական սպասարկում և նորոգում իրականացնող կենտրոնի անվանումը, հասցեն, հեռախոսահամարը

պայմանագրի համարը)

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության \_\_\_\_\_ պետ \_\_\_\_\_  
ստերաբաժանման անվանումը (ստորագրությունը)

Կ.Տ \_\_\_\_\_ 200 թ.

**Գրառում գրանցումից հանելու մասին**

Հսկիչ-դրամարկղային մեքենան հանված է գրանցումից  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության \_\_\_\_\_ պետ \_\_\_\_\_  
(ստերաբաժանման անվանումը ) (ստորագրություն)

Կ.Տ \_\_\_\_\_ 200 թ.

ՀՂՄ-ի գործարկման ԱԿՏ N \_\_\_\_\_

1. Հսկիչ-դրամարկղային մեքենա \_\_\_\_\_  
(մոդելը)
2. Գործարանային համարը \_\_\_\_\_
3. Հարկային մարմնում գրանցման համարը \_\_\_\_\_
4. Արտադրության տարեթիվը \_\_\_\_\_
5. Տեղադրման վայրը \_\_\_\_\_  
(կազմակերպության գործունեության իրականացման վայրը (կամ տրանսպորտային միջոցի պետական գրանցման համարը) , հեռախոսահամարը)
6. Գործարկման օրը, ամիսը տարեթիվը \_\_\_\_\_ 200\_\_թ.
7. Գործարկող կազմակերպությունը \_\_\_\_\_  
(անվանումը, գտնվելու վայրը)
8. Երաշխիքային նորոգում կատարող կազմակերպությունը \_\_\_\_\_
9. Տեխնիկական սպասարկում իրականացնող՝ \_\_\_\_\_  
(իրավաբանական անձի անվանումը, հասցեն  
(ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը))

Գործարկումից առաջ ՀՂՄ-ի ֆիսկալային հիշողության տվյալները					
Հասույթը		Չեղյալ համարումը		Վերադարձը	
գումարը	գնումների թիվը	գումարը	թիվը	գումարը	թիվը

Կազմակերպության ղեկավար \_\_\_\_\_  
Կ.Տ. (ստորագրությունը, անունը, ազգանունը, հայրանունը)

Կազմակերպության հաշվապահ \_\_\_\_\_  
(ստորագրությունը, անունը, ազգանունը, հայրանունը)

Պատասխանատու անձ \_\_\_\_\_  
(ստորագրությունը, անունը, ազգանունը, հայրանունը)

Հարկային մարմնի ներկայացուցիչ \_\_\_\_\_  
Կ.Տ. (ստորագրությունը, անունը, ազգանունը, հայրանունը)

Գործարկող կազմակերպության ներկայացուցիչ \_\_\_\_\_  
Կ.Տ. (ստորագրությունը, անունը, ազգանունը, հայրանունը)

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 200\_\_թ.

Կազմակերպությունը \_\_\_\_\_  
(անվանումը և ՀՎՀՀ-ն)

Գործունեության իրականացման վայրը \_\_\_\_\_  
(հասցեն, հեռախոսահամարը)

Կամ տրանսպորտային միջոցի պետական գրանցման համարը \_\_\_\_\_

Հ Ա Յ Տ N \_\_\_\_\_

**Տեխնիկական սպասարկման և նորոգման  
մասնագետներ հրավիրելու մասին**

N/N ը/կ	ՀՂՄ-ի մոդելը	Հարկային մարմնում ՀՂՄ-ի գրանցման համարը	ՀՂՄ-ի գործարանային համարը	Հրավիրման օրը, ժամը	ՀՂՄ-ի խափանման բնույթը
1	2	3	4	5	6

Կազմակերպության ղեկավար \_\_\_\_\_

\_\_\_\_\_  
(անունը, ազգանունը, հայրանունը, ստորագրություն)

Կ.Տ.

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 200\_\_թ.

ԱԿՏ N \_\_\_\_\_

**ՀԴՄ-ի նորոգման ժամանակ ֆիսկալային (հարկային) հիշողության տվյալների մասին**

1. Կազմակերպությունը \_\_\_\_\_  
(անվանումը, ՀՎՀՀ-ն)
2. Հսկիչ-դրամարկղային մեքենան \_\_\_\_\_  
(մոդելը)
3. Գործարանային համարը \_\_\_\_\_
4. Հարկային մարմնում գրանցման համարը \_\_\_\_\_

Նորոգման առաքելուց առաջ ՀԴՄ-ի ֆիսկալային հիշողության տվյալները					
հասույթը		չեղյալ համարումը		վերադարձը	
գումար	գնումների թիվը	գումարը	թիվը	գումարը	թիվը

**Նորոգման առաքելուց առաջ**

Կազմակերպության ղեկավարը \_\_\_\_\_  
Կ.Տ. (ստորագրությունը, անունը, ազգանունը, հայրանունը)

Հարկային մարմնի ներկայացուցիչ \_\_\_\_\_  
Կ.Տ. (ստորագրությունը, անունը, ազգանունը, հայրանունը)

Սպասարկող կենտրոնի ներկայացուցիչ \_\_\_\_\_  
Կ.Տ. (ստորագրությունը, անունը, ազգանունը, հայրանունը)

Նորոգման առաքելուց առաջ \_\_\_\_\_  
ՀԴՄ-ի բացված կապարակնիքը\*  « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 200\_թ.

Նորոգումից վերադարձնելու պահին ՀԴՄ-ի ֆիսկալային հիշողության տվյալները					
հասույթը		չեղյալ համարումը		վերադարձը	
գումարը	գնումների թիվը	գումարը	թիվը	գումարը	թիվը

**Նորոգումից վերադարձնելու պահին**

Կազմակերպության ղեկավարը \_\_\_\_\_  
Կ.Տ. (ստորագրությունը, անունը, ազգանունը, հայրանունը)

Հարկային մարմնի ներկայացուցիչ \_\_\_\_\_  
Կ.Տ. (ստորագրությունը, անունը, ազգանունը, հայրանունը)

Տեխնիկական սպասարկման կենտրոնի ներկայացուցիչ \_\_\_\_\_  
Կ.Տ. (ստորագրությունը, անունը, ազգանունը, հայրանունը)

Նորոգումից հետո ՀԴՄ-ի կապարակնիքի համարը \_\_\_\_\_  
« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 200\_թ.

\*Բացված կապարակնիքով ակտի օրինակը մնում է հարկային մարմնում , մնացած ակտերում նշվում է այդ կապարակնիքի համարը

Գ Ի Ր Ք N \_\_\_\_\_

**ՀԴՄ-ների վերանորոգման և տեխնիկական սպասարկման մասին տվյալների գրանցման**

1. Կազմակերպությունը \_\_\_\_\_  
(անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը) ՀՎՀՀ-ն)
2. Հսկիչ դրամարկղային մեքենան \_\_\_\_\_  
(մոդելը)
3. Գործարանային համարը \_\_\_\_\_
4. Արտադրության տարեթիվը \_\_\_\_\_
5. Տեղադրման վայրը \_\_\_\_\_  
(կազմակերպության գործունեության իրականացման վայրը կամ տրանսպորտային միջոցի պետական գրանցման համարը), հեռախոսահամարը)
6. ՀԴՄ-ի կապարակնիքի համարը\* \_\_\_\_\_

(Գրքի էջի ձև)

N/N ը/կ	Նորոգման (տեխնիկական սպասարկման) իրականացման հրավերի հայտի համարը, հայտը ներկայացնելու օրը, ամիսը, տարեթիվը	Խափանման ամսաթիվը և ժամը	Նորոգման հանձնման (տեխնիկական սպասարկման սկսման) օրը, ամիսը, տարեթիվը և ժամը	Նորոգումից վերադարձման (տեխնիկական սպասարկման ավարտի) օրը, ամիսը, տարեթիվը և ժամը	Տեխնիկական սպասարկում և (կամ) նորոգում իրականացնող կազմակերպության անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը և ՀՎՀՀ-ն	ՀԴՄ-ի նորոգման ժամանակ ֆիսկալային (հարկային) հիշողության տվյալների հանման ակտի համարը և ստորագրման օրը, ամիսը, տարեթիվը	Պատասխանատու անձի պաշտոնը, ստորագրությունը և անունը, ազգանունը, հայրանունը	
							նորոգում (տեխնիկական սպասարկում) իրականացնողի	նորոգում (տեխնիկական սպասարկում) ընդունողի
1	2	3	4	5	6	7	8	9

\* Կապարակնիքի համարի փոփոխման դեպքում նշվում են նոր կապարակնիքի համարը և կապարակնքման օրը, ամիսը, տարեթիվը

\*\* Տեխնիկական սպասարկման դեպքում, եթե ՀԴՄ-ի կապարակնիքը չի բացվում և ակտ չի կազմվում, ապա սույն սյունակում գրառում չի կատարվում:

Գ Ի Ր Ք N \_\_\_\_\_

Կատարված տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքների հաշվառման

1. Կազմակերպությունը \_\_\_\_\_  
(անվանումը և ՀՎՀՀ-ն)

2. Գործունեության իրականացման վայրը \_\_\_\_\_  
(հասցեն, հեռախոսահամարը)

կամ տրանսպորտային միջոցի պետական գրանցման համարը \_\_\_\_\_

(Գրքի էջի ձև)

N/N ը/կ	Նորոգման(տեխնիկական սպասարկման) իրականացման հրավերի հայտի համարը, հայտը ներկայացնելու օրը, ամիսը, տարեթիվը	Հայտը ներկայացնողի անվանումը և ՀՎՀՀ-ն	Խափանված հանգույցի անվանումը	Խափանման բնույթը (պատճառը)	ՀԴՄ-ի նորոգման վերցնելու (տեխնիկական սպասարկման) օրը ամիսը, տարեթիվը և ժամը	ՀԴՄ-ի նորոգման (տեխնիկական սպասարկման) ավարտի օրը, ամիսը, տարեթիվը և ժամը
1	2	3	4	5	6	7

Ա Կ Տ N \_\_\_\_\_

**Վաճառված ապրանքների հետընդունման**

<b>Վաճառող*</b>
1. Անվանումը _____
2. ՀՎՀՀ-ն _____
3. Հասցեն _____

<b>Գնորդ**</b>
1. Անվանումը _____
2. ՀՎՀՀ-ն _____
3. Հասցեն _____

Վաճառքը ձևակերպող ՀԴՄ-ի՝ գործարանային համարը \_\_\_\_\_

հարկային մարմնում գրանցման համարը \_\_\_\_\_

Ապրանքի վերադարձի (չփոխարինման) պատճառը \_\_\_\_\_

N/N ը/կ	Հետընդունված ապրանքների անվանումը	Քանակը		Միավորի գինը		Գումարը	
		թվերով	տառերով	թվերով	տառերով	թվերով	տառերով
<b>Ընդամենը</b>							

Հետընդունված ապրանքների  
գնման չեկի (կտրոնի) համարը \_\_\_\_\_ տպելու օրը, ամիսը, տարեթիվը և ժամը \_\_\_\_\_

Ձևակերպված վերադարձի  
չեկի (կտրոնի) համարը \_\_\_\_\_ տպելու օրը, ամիսը, տարեթիվը և ժամը \_\_\_\_\_

Վաճառող՝  
Դեկավար (անհատ ձեռնարկատեր) \_\_\_\_\_  
(ստորագրությունը)

Գնորդ \_\_\_\_\_  
(ստորագրությունը)

Գլխավոր հաշվապահ \_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_ 200

թ.

\* Լրացվում են անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը:

\*\* Եթե գնորդը քաղաքացի է, ապա բաժինը չի լրացվում:

Ա Կ Տ Ն \_\_\_\_\_

**Գումարների՝ սխալմամբ գրանցման**

Կազմակերպության  
անվանումը\* \_\_\_\_\_

ՀՎՀՀ-ն \_\_\_\_\_

Գործունեության իրականացման վայրը \_\_\_\_\_

կամ տրանսպորտային միջոցի պետական գրանցման համարը \_\_\_\_\_

Օգտագործվող ՀՂՄ-ի՝  
գործարանային համարը \_\_\_\_\_

հարկային մարմնում գրանցման համարը \_\_\_\_\_

Սխալ գումարով տպված չեկի (կտրոնի)՝

համարը \_\_\_\_\_ տպելու օրը, ամիսը, տարեթիվը և ժամը \_\_\_\_\_

սխալմամբ գրանցված գումարը \_\_\_\_\_  
(թվերով և տառերով)

Ձևակերպված վերադարձի չեկի (կտրոնի)՝

համարը \_\_\_\_\_ տպելու օրը, ամիսը, տարեթիվը և ժամը \_\_\_\_\_

**Կազմակերպության**  
ղեկավար (անհատ ձեռնարկատեր) \_\_\_\_\_  
(ստորագրությունը)

գլխավոր հաշվապահ \_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_ 200 թ.

\* Եթե վաճառողն անհատ ձեռնարկատեր է, լրացվում են նրա անունը և ազգանունը:



Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական  
ծառայության ստորաբաժանման անվանումը \_\_\_\_\_

Փաստաթղթի հերթական համարը  
N \_\_\_\_\_  
(լրացվում է հարկային տեսչության կողմից)

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

200 թ. \_\_\_\_\_ ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարման,  
վերադարձի և գումարների՝ սխալմամբ գրանցման մասին

ՀՂՄ-ն օգտագործող կազմակերպության տվյալները՝  
անվանումը\* \_\_\_\_\_

ՀՎՀՀ-ն \_\_\_\_\_

Գործունեության իրականացման վայրը \_\_\_\_\_

կամ տրանսպորտային միջոցի պետական գրանցման համարը \_\_\_\_\_

հեռախոսահամարը \_\_\_\_\_

Օգտագործվող ՀՂՄ-ի տվյալները՝  
գործարանային համարը \_\_\_\_\_

Հարկային մարմնում գրանցման համարը \_\_\_\_\_

Չեղյալ համարման՝  
թիվը \_\_\_\_\_ ընդհանուր գումարը \_\_\_\_\_

Կատարված վերադարձի՝  
թիվը \_\_\_\_\_ ընդհանուր գումարը \_\_\_\_\_

Սխալմամբ կատարված գրանցումների՝  
թիվը \_\_\_\_\_ ընդհանուր գումարը \_\_\_\_\_

Կազմակերպության  
ղեկավար (անհատ ձեռնարկատեր) \_\_\_\_\_  
(ստորագրությունը)

գլխավոր հաշվապահ \_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_ 200 թ.

\* Եթե վաճառողն անհատ ձեռնարկատեր է, լրացվում են նրա անունը և ազգանունը:

ԱԿՏ N \_\_\_\_\_

Ժամանակավորապես օգտագործվող ՀԴՄ-ի ֆինկալային (հարկային) հիշողության տվյալների մասին

- 1. Կազմակերպությունը \_\_\_\_\_ (անվանումը , ՀՎՀՀ-ն)
- 2. Ժամանակավորապես օգտագործվող հսկիչ-դրամարկղային մեքենան \_\_\_\_\_ (մոդելը)
- 3. Կապարակնիքի համարը\* \_\_\_\_\_
- 4. Գործարանային համարը \_\_\_\_\_
- 5. Հարկային մարմնում գրանցման համարը \_\_\_\_\_

Ժամանակավորապես շահագործելու համար վերցնելուց առաջ ՀԴՄ-ի ֆինկալային հիշողության տվյալները					
Հասույթ		Ջրոյացում		Վերադարձ	
գումարը	գնումների թիվը	գումարը	թիվը	գումարը	թիվը

Ժամանակավորապես շահագործելու համար վերցնելուց առաջ

Կազմակերպության ղեկավար \_\_\_\_\_  
Կ.Տ. (ստորագրությունը, անունը, ազգանունը, հայրանունը)

Հարկային մարմնի ներկայացուցիչ \_\_\_\_\_  
Կ.Տ. (ստորագրությունը, անունը, ազգանունը, հայրանունը)

ՀԴՄ-ի ժամանակավորապես տրամադրվող կազմակերպության ներկայացուցիչը \_\_\_\_\_  
Կ.Տ. (ստորագրությունը, անունը, ազգանունը, հայրանունը)  
« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 200\_\_թ.

Ժամանակավորապես շահագործելուց հետո ՀԴՄ-ի ֆինկալային հիշողության տվյալները					
հասույթը		չեղյալ համարումը		վերադարձը	
գումարը	գնումների թիվը	գումարը	թիվը	գումարը	թիվը

Նորոգումից վերադարձնելու պահին

Կազմակերպության ղեկավար \_\_\_\_\_  
Կ.Տ. (ստորագրությունը, անունը, ազգանունը, հայրանունը)

Հարկային մարմնի ներկայացուցիչ \_\_\_\_\_  
Կ.Տ. (ստորագրությունը, անունը, ազգանունը, հայրանունը)

ՀԴՄ-ի ժամանակավորապես տրամադրվող կազմակերպության ներկայացուցիչ \_\_\_\_\_  
Կ.Տ. (ստորագրությունը, անունը, ազգանունը, հայրանունը)

Ժամանակավորապես օգտագործված ՀԴՄ-ի կապարակնիքը\*\*  « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 200\_\_թ.

\* Նշվում է ժամանակավորապես օգտագործելուց առաջ ՀԴՄ-ի կապարակնիքի համարը  
 \*\*Բացված կապարակնիքով ակտի օրինակը մնում է հարկային մարմնում, մնացած ակտերում նշվում է այդ կապարակնիքի համարը

\*1) ԼՂՀ կառավարության 22.12.09թ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 26-ի թիվ 211 որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 822-Ն որոշման խմբագրությամբ